Երամեանց), Եօրէամ աղայ, Մահտեսի Ստեփանեան Յովհաննէս աղայ։

Գ. Էվսատէն էին՝ Աչնան Պօղոս աղայ (մինչեւ 1880ը ազգային գործերուն կռուած փոքրիկ Ծերուկ մը), Միսաքեան Յակոբճան աղայ, Եօրկի աղայ (հայ-հռոմ)։

Եւ Ա. Էտնայ էին՝ Բինկեանցի Խաչատուր աղայ, Էլիմեան Մաթոս աղայ, Միւպահեաճեան Պաղտասար աղայ, Ղօնչեկիւլեան Յովհան և Մարտիրոս աղայ, Մահտեսի Սաավրի աղայ։

Բ. Էտնայ էին՝ Մոմճեան Նիկողոս աղայ, Եապըճեան Յովհաննէս աղայ, Տամատ Յովհան աղայ, Էսմէր

նաւանդ իր կողմի գրողներուն. դարձեալ նոյն միջոցներն ալ երկու լուսակցութիւն սաստիկ զայրացած էին՝ իրարու ինչպէս՝ մին Գալեանցն ու Տատեանցը միւսըճեզայիրցիինն և իր կցորդ սեղանաւորներունը։

— Մկրտիչ ամիրան կը կոչուի եղեր նաեւ Ճովուեանց, և այդ ազգատոհմին ծագումը կը տարուի շատ հին ժամանակներ։ Այդ հին ազգատոհմին անունը մշտնջենաւորելու համար՝ իւրաքանչիւր տանուտէր ջանացիր է իր զաւակներէն մին անուանել հովիւ, և այդ ազգաբանութիւնն է որ կը շարունակուէր երեք դարէ հետէ որդի ի հօրէ. աղոնց նախահաւերէն Գունեաթ կամ Գինեաթ անունով մեծ մը՝ պատահառով մը կու գայ հաստատուիլ Սեբաստիա և անժառանգ ըլլալով կը յօժարի որդեգրել ազնուական ցեղէ մը Արծկէացի որբ պատանի մը՝ Գուղամ կամ Ապուլամրի անուն։ քանի մը տարիէն կամուսնացունէ զայն, և քիչ մը ետքը՝ Ս. Սուլթան Սելիմին պարսկաստան արշաւելու ատեն՝ Գ. Գունեաթ կը քաշուի Ակնի երկիրը, ուր քաղաքին մօտ տեղ մը կը հաստատէ բնակութիւնք և այդ տեղին ալ անունը կը դնէ՝ իր որդեգիրին անունովը՝ Ապուղամրի. այս այն գիւղն է որ ժամանակէ մը ետքն ու հիմայ ալ կը կոչուի Ապուչէխս։ Գ. Գուղամի ծնած բոլոր զաւկըները անդէն խանձարուրքի մէջ կը մեռնէին բաց ի վեր-